ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Շահումյանի թ/ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Շահումյանի թ/ֆ
Հեռ.՝ 095 84 00 08
փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

N 24

<<12>> փետրվարի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարի՝ 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:

Առդիր՝ 5 թերթ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

<<12>> փետրվարի 2020 թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարի՝ 2020 թվականի ընթացքում իրականացրած աշխատանքների վերաբերյալ

«06» փետրվարի 2020 թվական գ. Շահումյանի թ/ֆ

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ Արմեն Համբարձումյանի, համայնքի բնակիչների, համայնքապետարանի աշխատակազմի

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքապետարանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, ներկայացնում է 2019 թվականի ընթացքում իրականացրած աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Համայնքն ունի 293.83 հեկտար հողատարածք, որից 214.11 հեկտարը գյուղատնտեսական նշանակության են:

Բնակչության թիվը համայնքում 909 մարդ է, տնտեսությունների քանակը՝ 210:

2019 թվականին համայնքում ծնվել է 12 երեխա, մահացել է 6 մարդ:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն է ուղարկվել համայնքի՝ 2019 թվականի բյուջեի փոփոխությունների, 2020 թվականի բյուջեի, համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերը՝ պետական իրավական փորձաքննության ենթարկելու համար:

Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակիցների կողմից բնակիչները տեղեկացվել են իրենց առջև դրված հիմնախնդիրների լուծմանն առնչվող՝ օրենքի բնագավառում ցանկացած նորամուծության, իրազեկվել են հողի հարկի, գույքահարկի և տեղական տուրքերի մուծման, ինչպես նաև այլ կարևոր հարցերի մասին:

Համայնքապետարանն օգտագործել է բոլոր հնարավորությունները՝ համայնքի բնակիչների կողմից բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տալու, քանի որ վերջիններիս հետ մշտապես գտնվում է անմիջական շփման մեջ:

Համայնքապետարանն իր հնարավորությունների սահմաններում աջակցել է բնակչությանը այլ հիմնարկությունների հետ ունեցած խնդիրների համահարթեցման գործում՝ ցուցաբերելով խորհրդատվական օգնություն, ինչպես նաև ապահովել է նրանց փաստաթղթային շրջանառությունը՝ տեղեկանքների կամ այլ փաստաթղթերի տեսքով:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի 214 բնակիչ ստացել է բազմաբնույթ բովանդակությամբ տեղեկանքներ:

Տարբեր հիմնարկություններից մուտքագրվել է 356 գրություն, ըստ անհրաժեշտության պատասխանվել է 209 գրության:

Ընդունվել է համայնքի ղեկավարի 62 որոշում, արձակվել 34 կարգադրություն, տրվել է աշխատակազմի քարտուղարի 10 հրաման:

Անցկացվել է ավագանու 6 հերթական և 6 արտահերթ նիստ: Քննարկվել են համայնքին առնչվող կարևոր լուծում պահանջող հարցեր: Կայացվել է ավագանու 68 որոշում:

Համայնքապետարանը կազմակերպել և Ազգային վիճակագրական ծառայության Վաղարշապատի տարածքային բաժին է ներկայացրել համայնքապետարանի աշխատակազմի միջոցով իրականացված հաշվառումը անասունների գլխաքանակի և ցանքատարածությունների վերաբերյալ, համայնքի բնակչության սեռատարիքային կազմի , բնակարանային ֆոնդի մասին և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Համայնքապետարանը անհրաժեշտության դեպքում սոցիալապես անապահով պայմաններում ապրող որոշ ընտանիքների աջակցել է՝ պետության կողմից տրամադրվելիք նպաստներն ստանալու գործում:

Հնարավորության սահմաններում համայնքի բյուջեի հաշվին իրականացվել են սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելու աշխատանքներ՝ 287400 դրամի չափով:

Բանակի օրվա առթիվ համայնքի 7 զինվորի ընտանիքի տրամադրվել է 20.000-ական դրամ:

Տեառնընդառաջի տոնի կապակցությամբ 2 նորաստեղծ ընտանիքի նվիրվել են ոսկյա մատանիներ և ծաղկե զամբյուղներ:

Կանանց միջազգային տոնի առթիվ համայնքի 40 թոշակառու կանանց տրամադրվել են մեկական տուփ թեյի բաժակներ, համայնքի կանանց՝ մեկական վարդեր, ավագանիների կանանց և համայնքապետարանի կին աշխատակիցներին՝ ծաղկե զամբյուղներ:

Ապրիլի 27-ին՝ Քաղաքացու օրվա առթիվ համայնքի 16 անապահով ընտանիքի տրամադրվել է օգնություն՝ սննդամթերքի տեսքով:

«Հատուցում ազատամարտիկներին» ծրագրի շրջանակներում Արցախյան ազատամարտի 1 մասնակցի տրամադրվել է 50.000 դրամ՝ հանգիստը Սև ծովի ափին կազմակերպելու համար:

Վերջին զանգի առթիվ Շահումյանի միջնակարգ դպրոցի շրջանավարտներին տրամադրվել է 300000 դրամ:

1-ին դասարան հաճախող և գերազանց առաջադիմություն ունեցող սովորողներին նվերներ տրամադրելու համար հատկացվել է 104000 դրամ:

0-12 տարեկան 182 երեխաների համար Ամանորի տոնի առթիվ նվեր ձեռքբերելու նպատակով հատկացվել է 400000 դրամ:

Ընտանիքի հուղարկավորության ծախսերին օժանդակելու համար 6 ընտանիքի տրվել է 50000-ական դրամ: Յուրաքանչյուր հանգուցյալի ընտանիքի համայնքապետարանի կողմից հատկացվել է մեկ ծաղկեպսակ:

Ծնելիության մակարդակը խթանելու նպատակով յուրաքանչյուր երեխայի ծնունդի կապակցությամբ 12 ընտանիքի տրվել է 50000-ական դրամ:

2019 թվականի ընթացքում համայնքում յուրաքանչյուր կիրակի օր իրականացվել են աղբահանության աշխատանքներ:

Մարտի 23-ին և հունիսի 8-ին բնակիչների մասնակցությամբ կազմակերպվել է շաբաթօրյակ:

Ողջ տարվա ընթացքում համակարգված կազմակերպվել է համայնքի փողոցների լուսավորության գործընթացը:

Համայնքը սպասարկող անասնաբույժին իր մատուցած ծառայությունների դիմաց վճարվել է 436500 դրամ:

Ժամանակին վճարվել են համայնքապետարանի աշխատակիցների աշխատավարձերը՝ 15835100 դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են 1-ին փողոցի սանմաքրման, աղբաթափման, հարթեցման, փոսալցման և խճապատման աշխատանքներ:

Իրականացվել են 1-ին փողոցի 32 և 44 շենքերի, 4-րդ փողոցի 1-8 շենքերի և սեփական տների դիտահորերի և ջրահեռացման համակարգի խցանված խողովակաշարերի մաքրման աշխատանքեր:

Համայնքի 32 և 44 բազմաբնակարան շենքերի մուտքերի 4 դռները փոխարինվել են նոր երկաթյա դռներով :

Վերանորոգվել է Ավան թաղամասի արտաքին լուսավորության ցանցը:

Հարթեցվել, աղբից մաքրվել և բարեկարգվել է դեպի գերեզմանատուն տանող ճանապարհը:

Համայնքի 1-ին փողոցի գազատարի կառուցման համար ներկայացվել է սուբվենցիոն հայտ, որը հավանության է արժանացել տարածքային կառավարման նախարարությունում: Ձեռք է բերվել գազատարի կառուցման նախագիծ-նախահաշիվ: Գործող կարգի համաձայն հայտարարվել է մրցույթ: Հաղթող է ճանաչվել «Վանդաժի» ՍՊԸ-ն: Ժամանակին ավարտվել են սուբվենցիոն ծրագրով գազատարի կառուցման աշխատանքները:

Շահումյանի թ/ֆ համայնքապետարանը տարվա ընթացքում աջակցել է մարզային զինվորական կոմիսարիատի գործունեությանը՝ հնարավորության սահմաններում տրամադրելով բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը համայնքում գտնվող ենթակա անձանց վերաբերյալ:

Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակիցների կողմից 2019 թվականի ընթացքում օրենքով սահմանված կարգով կազմակերպվել են հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի հավաքագրման և վերահսկման աշխատանքներ :

Գործող կարգի համաձայն հայտարարվել և անցկացվել է համայնքային ծառայության թափուր աշխատատեղերի չորս մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի, գլխավոր, առաջատար և երկրորդ կարգի մասնագետների: Մրցույթում հաղթող ճանաչված անձանց կողմից համալրվել են թափուր աշխատատեղերը:

Եկամուտներ են նախատեսվել 55713.0 հազար դրամ, որից վարչական բյուջեով՝ 34118.1 հազար դրամ, իսկ ֆոնդային բյուջեով՝ 21594.9 հազար դրամ:

Համաձայն ներկայացված հաշվետվությունների՝ վարչական բյուջեն եկամուտների մասով կատարվել է 97.8%-ով կամ պլանով նախատեսված 34118.1 հազար դրամի դիմաց կատարվել է 33365.6 հազար դրամով, այդ թվում՝ սեփական եկամուտների գծով 3051.0 հազար դրամի դիմաց կատարվել է 2285.2 հազար դրամ (74.9%):

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Շահումյանի թ/ֆ համայնքի կողմից ներկայացված հաստատված բյուջեի համաձայն 2019 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 21594.9 հազար դրամ:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի գծով՝ 25145.1 հազար դրամ (100%):

Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի 2019 թվականի սեփական եկամուտներ են նախատեսվել 3051.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 2285.2 հազար դրամ (74.9%):

Հողի հարկից եկամուտ նախատեսվել է 552.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 557.3 հազար դրամ (101%):

Գույքահարկի գծով նախատեսվել է 2020.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 1686.9 հազար դրամ (83.3%):

Տուրքեր նախատեսվել են 24.0 հազար դրամ, փաստացի գումար չի գանձվել (0%):

Ոչ հարկային եկամուտներ նախատեսվել են 455.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 54.3 հազար դրամ (12.0%):

ԾԱԽՍԵՐ

Բյուջեի ֆոնդային մասով ծախս նախատեսվել է 27516.9 հազար դրամ, փաստացի ծախսվել է 14139.0 հազար դրամ (51.4%), որից՝

✓ կապիտալ նորոգումների ծախս նախատեսվել է 21722.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 12724.0 հազար դրամ (58.6 %)՝ սուբվենցիոն ծրագրով 1-ին փողոցի գազատարի կառուցման համար.

✓ վարչական սարքավորումների ձեռքբերման ծախսեր են նախատեսվել 4794.9 հազար դրամ, փաստացի ծախսվել է 415.0 հազար դրամ (8.7%).

✓ այլ ակտիվների ձեռքբերման ծախսեր են նախատեսվել 1000.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1000.0 հազար դրամ (100%)՝ գազատարի կառուցման նախագիծ-նախահաշվի և տեխնիկական հսկողության համար:

Բյուջեի վարչական մասով ծախս է նախատեսվել 28196.1 հազար դրամ, փաստացի ծախսվել է 25409.5 հազար դրամ (90.1%), որից՝

✓ տեղական ինքնակառավարում՝ ծախս է նախատեսվել 19982,0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 18356,4 հազար դրամ (91.9%).

✓ գյուղատնտեսություն՝ ծախս նախատեսվել է 437,0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 436,5հազար դրամ (99,0%).

✓ սանմաքրում՝ ծախս է նախատեսվել 1672,0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1672,0հազար դրամ (100%).

✓ ճանապարհների վերանորոգում՝ ծախս նախատեսվել է 1000.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 990.0 հազար դրամ (99%).

✓ արտաքին լուսավորում՝ ծախս նախատեսվել է 155.1 հազար դրամ, փաստացի չի ծախսվել 155,1(100%).

✓ մշակութային միջոցառումներ՝ ծախս նախատեսվել է 1200,0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1058,0հազար դրամ (88,2%).

✓ համայնքային այլ ծառայություններ՝ ծախս նախատեսվել է 2250.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1364.1 հազար դրամ (60.6%).

✓ սոցիալական ապահովություն՝ ծախս նախատեսվել է 1500.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1377.4 հազար դրամ (91.8%):

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

«06» փետրվարի 2020 թ.
Շահումյանի թ/ֆ համայնք